

ԱՌԱՋԻՆ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻ ՀԱՅ ՍՊԱՆԵՐԸ: ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՆԱԿԻ ՍՊԱՆԵՐԸ: 1914–1920 ԹԹ.՝ ՊԱՏՄԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ

АМАТУНИ ВИРАБЯН, СОНЯ МИРЗОЯН

ОФИЦЕРЫ-АРМЯНЕ ПЕРВОЙ МИРОВОЙ ВОЙНЫ. ОФИЦЕРЫ АРМИИ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
1914–1920 ГГ.

ИСТОРИКО-БИОГРАФИЧЕСКИЙ СЛОВАРЬ
(Ереван, Национальный архив Армении, 2022, 1392 с., 40 с. илл.)

«Մահ ոչ իմացեալ մահ է, մահ իմացեալ անմահութիւն»:

Հայաստանի ազգային արխիվը երկար տարիների տքնաջան գիտական պրպտումներից հետո հրատարակել է Առաջին համաշխարհային պատերազմին մասնակցած և Հայաստանի Հանրապետության զինված ուժերում ծառայած սպաների պատմակենսագրական բառարանը, որտեղ ներկայացվել են նրանց անցած մարտական ուղին, զբաղեցրած պաշտոնները, պարգևները և այլն: Շրջանառության մեջ մտցվել են բազմաթիվ նորահայտ փաստաթղթեր, որոնց օգնությամբ ճշտվել կամ լրացվել են այս կամ այն սպայի կենսագրական տվյալները: Արձանագրենք, որ կատարվել է լայնածավալ հետազոտական աշխատանք, որում կազմողներ պ.գ.դ. Ամատունի Վիրաբյանին և պ.գ.թ. Սոնյա Միրզոյանին աջակցել են արխիվի մասնագետներ՝ պ.գ.թ. Գոհար Ավագյանը և պ.գ.թ. Հայկ Վիրաբյանը: Կենսագրական ժողովածուի նախապատրաստական աշխատանքներին մասնակցել են Նունե Բալբաբյանը և Սվետլանա Սարգսյանը: Կենսագրական բառարանի կազմմանն օգնել են պ.գ.դ. Սերգեյ Վ. Վոլկովը և մ.գ.թ. Ռաֆայել Մ. Աբրահամյանը: Ուսումնասիրությունը հրատարակվել է Ռուսաստանի Դաշնության վաստակավոր շինարար և բարեգործ Վարդգես Արծրունու (1941–2019) մեկենասությամբ: Ժողո-

վածուում ներկայացվել են ավելի քան 7 հազար հայ սպաների կենսագրություններ[1]:

Պատմակենսագրական բառարանը կազմողները հիմնականում օգտվել են ՀԱԱ-ում պահվող 17 ֆոնդերից, ինչպես նաև ռուսական արխիվներից և համացանցից[2]:

Առաջին համաշխարհային պատերազմի տարբեր ռազմաթատերաբեմերի մարտական գործողություններին մասնակցել են զգալի թվով հայ սպաներ: Հայ սպաներ կռվել են Կովկասյան ռազմաճակատի (ռուս-թուրքական) տարբեր զորամասերում, ռուսական իշխանության կողմից կազմված հայ կամավորական-աշխարհազորային խմբերում կամ դրուժիններում, որտեղ ընդգրկվել են նաև օտարահպատակ հայեր: Խմբերը գլխավորել են նշանավոր հայդուկներ և գործիչներ Անդրանիկ Օզանյանը, Դրաստամատ Կանայանը (Դրո), Համազասպ Սրվանձտյանցը (Համազասպ), Արշակ Գավաֆյանը (Քեռի), Սարգիս Մեհրաբյանը (Խանասորի Վարդան), Հայկ Բժշկյանցը (Գայ), Հովսեփ Արղությանը և ուրիշները: Գեներալ Թովմաս Նազարբեկյանի բնորոշմամբ, կամավորական խմբերի հրամանատարներն էին «ժողովրդի սիրելի առաջնորդները»[3], իսկ գեներալ Եվգենի Մասլովսկու գնահատմամբ՝ նրանք իրենց ամբողջությամբ նվիրել էին հայրենիքի ազատագրության գործին[4]: Նա միաժամանակ նշում է, որ դրուժինները կազմակերպվել են քաղաքական նպատակներով[5], քանի որ մարտական գործողություններն ընթանալու էին Արևմտյան Հայաստանում և ռուսական զորքը տեղի հայ բնակչության աջակցության կարիք ուներ:

Հայկական խմբերը կամ դրուժինները ակտիվ մասնակցություն էին ունենում մարտական գործողություններին և հատկապես անգնահատելի էին հետախուզական գործողություններ իրականացնելու համար: 1914–1916 թթ. ընթացքում նրանք ձեռք են բերում ժամանակակից պատերազմներ վարելու

---

[1] Офицеры-армяне Первой мировой войны. Офицеры армии Республики Армения. 1914–1920. Историко-биографический словарь. / д.и.н. А.С. Вирабян, к.и.н. С.С. Мирзоян. Ереван, Национальный архив Армении, 2022, с. 30.

[2] Офицеры-армяне Первой мировой войны, с. 31.

[3] **Ռ. Սահակյան.** Թովմաս Նազարբեկյանի անտիպ հուշերը, ՎԷմ, 2019, № 1, էջ 277, ՀԱԱ, ֆ. 45, ց. 1, գ. 1, թ. 14–15:

[4] **Е.В. Масловский.** Мировая война на Кавказском фронте 1914–1917 г. Стратегический очерк, Париж, 1933, с. 38.

[5] Նույն տեղում, էջ 40:

փորձ, որը հետագայում՝ 1917–1920 թթ. օգտագործվում է թուրք–քրդական ուժերի դեմ պայքարում:

Ռուսական իշխանությունը, ի տարբերություն զինվորականների, կասկածանքով և անվստահությամբ էր վերաբերվում կամավորական խմբերին, ուստի հարմար առիթի էր սպասում՝ դրանք կազմացրելու համար: 1916 թ. ամռանը ռուսական հրամանատարությունը լուծարում է կամավորական խմբերը, որոնց հենքի վրա կազմակերպվում են վեց հրաձգային գումարտակներ, որոնցից մեկը՝ պահեստային: Գումարտակների հրամանատարները ռուսական բանակի հայ սպաներ էին: Գումարտակները մասնակցում են Կովկասյան ռազմաճակատում մղված մարտական գործողություններին, սակայն, կրկին զգուշանալով, հրամանատարությունը նրանց չի միավորում մեկ մարտավարական միավորի մեջ:

Իրավիճակը փոխվում է Փետրվարյան հեղափոխությունից հետո, երբ ռուսական բանակի Գերագույն գլխավոր հրամանատար, գեներալ Ալեքսեյ Բրուսիլովի 1917 թ. հունիսի 19-ի հրամանով հայկական հրաձգային գումարտակները վերակազմավորվում են երկու գումարտակներից կազմված հրաձգային գնդերի: Հունիսի 28-ի հրամանով հրաձգային գնդերը վերակազմավորվում են Հայկական հրաձգային բրիգադի, որի հրամանատար է նշանակվում գնդապետ, ապա՝ գեներալ-մայոր Պավել Բեժանբեկը (1869–1956)[6]:

1917 թ. հոկտեմբերի 23-ին սկսվում է Հայկական 2-րդ հրաձգային բրիգադի կազմավորումը, որի հրամանատար է նշանակվում փոխգնդապետ Պողոս (Պավել) Տեր-Սարգիսովը (1871–1920): Նոյեմբերի 16-ին Գերագույն գլխավոր հրամանատարության հրամանով սկիզբ է դրվում Հայկական կորպուսի կազմավորմանը, որի հրամանատար է նշանակվում գեներալ Թովմաս Նազարբեկյանը (Ֆոմա Նազարբեկով, 1855–1931): Կորպուսի մարտակազմը կազմել է 1687 սպա և 10388 զինվոր, ընդամենը՝ 11675 զինծառայող, իսկ Հայկական հավաքական ջոկատինը՝ 179 սպա, 13679 զինվոր և 1000 հեծյալ, ընդամենը՝ 14858 հոգի[7]:

Այս ընթացքում տեղի են ունենում հայկական զորամիավորումների շարունակվող ձևավորումները, որոնք ամենայն մանրամասնությամբ ներկացված են պատմաանձնային բառարանում[8]:

---

[6] Офицеры-армяне Первой мировой войны, с. 5–6.

[7] Офицеры-армяне Первой мировой войны, с. 15.

[8] Офицеры-армяне Первой мировой войны, с. 7–19.

Մասնագետները և ընթերցողները որոշ չափով տեղյակ էին Կովկասյան (ռուս-թուրքական) ռազմաճակատում մարտնչած հայ սպայության գործունեությանը, սակայն նրանց համար նորություն էր ռուս-ավստրիական ճակատում մարտական գործողություններին մասնակցած հայ սպաների կենսագրությունները: Նման վերաբերմունքն ունի մի քանի պատճառներ՝ մասնագետներն ավելի շատ հետաքրքրված էին Կովկասյան ռազմաճակատով, որտեղ տեղի էին ունենում հայ ժողովրդի համար բախտորոշ իրադարձություններ՝ կամավորական շարժում, արևմտահայության ինքնապաշտպանական մարտեր, արևմտահայության ցեղասպանություն, Արևմտյան Հայաստանի վերաշինություն և այլն: Պատճառներից մեկն էլ այն է, որ խորհրդային բանակում ծառայության անցած «նախկին» սպաներն աշխատել են «չհիշել» ցարական կամ ՀՀ բանակներում իրենց զբաղեցրած պաշտոնների և մարտական գործողություններին մասնակցության մասին: Ինչպես հայտնի է, նրանցից ոմանք, ինչպես օրինակ գեներալներ Հովհաննես Հախվերդյանը, Մովսես Սիլիկյանը գնդակահարվեցին, իսկ մյուսները դատապարտվեցին տարբեր պատժաժամկետների:

Ժողովածու կազմողները նշում են, որ Կովկասի փոխարքայությունում ձևավորվել են հայկական 7 դրուժիններ, որոնց անձնակազմի թիվը հասել է 10 հազարի[9] (էջ 4): Ընդհանուր առմամբ պատերազմին մասնակցել են 250 հազար ռուսահպատակ հայեր, Ֆրանսիայից, Մեծ Բրիտանիայից և ԱՄՆ-ից՝ 50 հազար հայեր: Շուրջ 300 հազար հայ զինծառայողներից 60 հազարը սպանվել կամ վիրավորվել է (էջ 4):

Հարկ ենք համարում նշել, որ արտասահմանից, հատկապես ԱՄՆ-ից որպես կամավոր ժամանած հայերից ոչ բոլորը մասնակցեցին մարտական գործողություններին:

Ժողովածուն կազմողների կատարած ուսումնասիրություններից պարզվում է, որ Առաջին համաշխարհային պատերազմին մասնակցել են 6440 հայ սպաներ, որոնցից.

№	Կոչումը	թիվը
1.	գեներալ	65
2.	գնդապետ	225
3.	փոխգնդապետ	155

[9] Офицеры-армяне Первой мировой войны, с. 4.

5.	կապիտան[10]	285
6.	ռոտմիստր[11]	27
7.	շտաբս-կապիտան[12]	540
8.	շտաբս-ռոտմիստր[13]	46
9.	պորուչիկ[14]	1035
10.	պոդպորուչիկ[15]	1290
11.	կորնետ[16]	85
12.	պրապորշչիկ[17]	2450[18]

Նշված սպաներից մարտական գործողությունների ընթացքում զոհվել, անհայտ կորել կամ մահացել են շուրջ 240-ը[19]: 720 սպաներ մասնակցել են հակաբոլշևիկյան Սպիտակ շարժմանը: Նրանցից 65-ը զոհվել կամ գնդակահարվել են բոլշևիկների կողմից[20]:

1918–1920 թթ. հայկական բանակում ծառայել են Առաջին աշխարհամարտի մասնակից ավելի քան 3400 սպա, որոնցից 2785-ը հայեր էին, իսկ 615-ը՝ այլազգիներ էին, հիմնականում՝ ռուսներ[21]:

Հայկական առանձին բանակային կորպուսում ծառայել են.

№	Կոչումը	թիվը
1.	գեներալ[22]	49

[10] Գլխապետ, ՀՀ բանակում՝ տե՛ս «Ռազմիկ», Երևան, 1920, № 1:

[11] Ավագ սպայական կոչում հեծելազորում, որը համապատասխանում է հետևակի կապիտանին:

[12] Ավագ սպայական կոչում, որը տրվում էր վաշտի հրամանատարներին:

[13] Ավագ սպայական կոչում՝ հեծելավաշտի հրամանատարի օգնական շարային գծով: ՀՀ բանակում՝ փոխգլխապետ, տե՛ս «Ռազմիկ», 1920, № 1:

[14] Կրտսեր սպայական կոչում: ՀՀ բանակում՝ տեղակալ, տե՛ս «Ռազմիկ», 1920, № 1:

[15] Կրտսեր սպայական կոչում: ՀՀ բանակում՝ փոխ-սպա, տե՛ս «Ռազմիկ», 1920, № 1:

[16] Կրտսեր սպայական կոչում:

[17] Կրտսեր սպայական կոչում: ՀՀ բանակում՝ վառատար, տե՛ս «Ռազմիկ», Երևան, 1920, № 1:

[18] Офицеры-армяне Первой мировой войны, с. 31.

[19] Офицеры-армяне Первой мировой войны, с. 31.

[20] Офицеры-армяне Первой мировой войны, с. 31.

[21] Офицеры-армяне Первой мировой войны, с. 31.

[22] 1920 թ. մայիսի 28-ին կառավարությունը շնորհակալություն է հայտնել ՀՀ բանակի սպարապետ, հետևազորի գեներալ Թ. Նազարբեկյանին՝ մատուցած ծառայության համար: Գեներալ-մայորներ Դանիել Բեկ-Փիրումյանը և Կոստանդին Գամազյանը արժանացել են գեներալ-լեյտենանտի կոչման, տե՛ս «Ռազմիկ», 1920, № 4:

2	գնդապետ[23]	140
3.	փոխգնդապետ[24]	115[25]

Գեներալներից 16-ը, գնդապետներից 73-ը և փոխգնդապետներից 50-ը պատկանում էին այլ ազգությունների[26]: Այս սպաներից 80-ը 1918–1919 թթ. ծառայել են Սպիտակ բանակում[27]: Հայկական բանակի շուրջ 160 սպա զոհվել է ծառայության բերումով կամ մահացել տարբեր հիվանդությունների հետևանքով[28]:

Հայաստանում խորհրդային կարգեր հաստատվելուց հետո 1921 թ. հունվարին 850 սպա ձերբակալվել և ուղարկվել է Բաքու՝ 11-րդ Կարմիր բանակի «տրամադրության» տակ, որից հետո նրանց աքսորել են Ռյազանի համակենտրոնացման ճամբար[29]:

Շուրջ 150 սպա մասնակցել է 1921 թ. փետրվարյան հակաբոլշևիկյան ապստամբությանը: Նրանց մի մասը հեռացել է արտասահման, ապա նրանց որոշ մասը 1921–1922 թթ. վերադարձել է Խորհրդային Հայաստան: Շուրջ 635 սպա ծառայության է անցել Կարմիր բանակում, իսկ նրանցից 330-ը մասնակցել է Հայրենական Մեծ պատերազմին[30]:

1920–30-ական թթ. 635 սպա գնդակահարվել է, և մոտ 200-ը բանտարկվել, 25-ը ձերբակալվել և որոշ ժամանակ անց ազատ են արձակվել[31]: Նրանցից պորուչիկ Սամվել Համբարձումյանը (1894–1955-ից հետո) մասնակցել է պատերազմին, ապա ծառայել ՀՀ Հայկական 2-րդ հետևակային գնդում: 1921 թ. հունվարին աքսորվել է Ռյազանի համակենտրոնացման ճամբար, սակայն նրան հաջողվել է փախչել, որից հետո ծառայության է անցել Կարմիր բանակում և նույնիսկ տեղավորվել է դասալքության դեմ պայքարի դաշտային հանձնաժողովում: 1938 թ. ձերբակալվել և դատապարտվել է 10 տարվա բանտարկության, ապա ազատ է արձակվել և աքսորվել է Ղազախստան[32]:

---

[23] ՀՀ բանակում՝ գլխապետ:
[24] ՀՀ բանակում՝ փոխգլխապետ:
[25] Офицеры-армяне Первой мировой войны, с. 31.
[26] Офицеры-армяне Первой мировой войны, с. 31.
[27] Офицеры-армяне Первой мировой войны, с. 31.
[28] Офицеры-армяне Первой мировой войны, с. 31.
[29] Офицеры-армяне Первой мировой войны, с. 31.
[30] Офицеры-армяне Первой мировой войны, с. 31.
[31] Офицеры-армяне Первой мировой войны, с. 141–142.
[32] Офицеры-армяне Первой мировой войны, с. 31.

Կենսագրական բառարանում ներկայացվել են այն հայ զինծառայողները, որոնք պարգևատրվել են Գեորգիևյան խաչի երեք կամ չորս խաչերով[33]: Այս պարգևը տրվում էր մարտերում աչքի ընկած շարքայիններին և կրտսեր սպաներին: Հավելենք, որ 1992 թ. Ռուսաստանի Դաշնության Գերագույն խորհրդի հրամանագրով վերականգնվել է «Գեորգիևյան խաչի» կարգավիճակը:

Ժողովածուի կազմման համար օգտագործվել են համացանցի մի քանի կայքէջեր, որոնք հնարավորություն են տվել լրացնել այս կամ այն անձի կենսագրության, անցած մարտական ուղու հետ կապված հիմնախնդիրները, որոնցից մի քանիսը կցանկանայինք ներկայացնել:

Պոդպորուչիկ Լևոն Գեորգիի Բաշինջաղյանը (1893–1938) ուսանել է Ս. Պետերբուրգի համալսարանի պատմա-բանասիրական ֆակուլտետում, մասնակցել է Աշխարհամարտին: Ավարտել է Պավլովյան ռազմական ուսումնարանը (1.12.1916): Ծառայության է անցել ՀՀ բանակի հետախուզությունում, ապա՝ հակահետախուզությունում: Խորհրդային կարգեր հաստատվելուց հետո նա վտարանդել է Պարսկաստան (1921–1922), ապա վերադարձել է հայրենիք: Շարունակել է ուսումը Պետրոգրադում: Աշխատել է տարբեր գիտահետազոտական ինստիտուտներում: Ձերբակալվել և գնդակահարվել է 1938 թ. հոկտեմբերի 17-ին: Սպան նշանավոր գեղանկարիչ Գևորգ Բաշինջաղյանի (1857–1925) որդին էր[34]:

Նշանավոր կինոբեմադրիչ Համո Բեկնազարյանի ավագ եղբայրը՝ կապիտան Գրիգորի Բեկնազարյանը (1887–1918) մասնակցել է պատերազմին, ծառայել Հայկական 6-րդ հրաձգային գնդում: Մարտի ընթացքում ստացված վերքերից մահացել է հոսպիտալում[35]:

Պորուչիկ Արտեմ Հովհաննիսյանը (Օվանեսով Խան-Կոտուրսկի, ?–1930), պատերազմի ժամանակ զբաղեցրել է Ռումինական ռազմաճակատում Սևծովյան նավատորմի շտաբի հակահետախուզական բաժանմունքի պետի պաշտոնը: ՀՀ զինված ուժերում զբաղեցրել է տարբեր պաշտոններ, որոնց թվում՝ Գլխավոր շտաբի հակահետախուզական բաժանմունքի պետի (1918), ՀՀ զորքերի հրամանատարի շտաբի հետախուզական բաժանմունքի պետի ժամանակավոր պաշտոնակատարի պաշտոնները[36]:

---

[33] Офицеры-армяне Первой мировой войны, с. 31.
[34] Офицеры-армяне Первой мировой войны, с. 291.
[35] Офицеры-армяне Первой мировой войны, с. 305.
[36] Офицеры-армяне Первой мировой войны, с. 898.

Առաջին աշխարհամարտի մասնակիցներ են Միխայիլ (Միքայել, 1892 – 1920) և Գեորգի (1886– ?) Մանասերյան (Մանասերյանց) եղբայրները: Նրանցից ավագը՝ Գեորգին ծառայել է ՀՀ բանակում: Խորհրդային տարիներին ծառայել է ռազմա-ճարտարագիտական վարչությունում[37]:

Փոխգնդապետ Խորեն Իգիթխանյանը (1887–1938) իր զինվորական ուղին սկսել է 1907 թ.: Թիֆլիսի հետևակային ուսումնարանի շրջանավարտը (1912 թ.) լրացուցիչ քննություն հանձնելով ստացել է հրետանու սպայի որակավորում: Մարտնչել է ռուս-ավստրիական ճակատում: Հայկական 2-րդ հրաձգային–հրետանային բրիգադի 1-ին մարտկոցի հրամանատարն էր: Մասնակցել է Սարդարապատի և Բաշ Ապարանի ճակատամարտերին (1918 թ. մայիս): Հայ-վրացական պատերազմի մասնակից է (1918 թ.): Խորհրդային կարգեր հաստատվելուց հետո աքսորվել է Ռյազանի համակենտրոնացման ճամբար (1921 թ. հունվար), սակայն նրան ճանապարհին հաջողվել է փախչել, ապա ծառայության է անցնել Կարմիր բանակում, որտեղ զբաղեցրել է տարբեր հրամանատարական պաշտոններ:

Գրիգորի Խախանյանը (Գրիգոր Տեր-Խախանյան, 1895–1939), Համաշխարհային պատերազմին մասնակցել է պրապորշչիկի կոչումով: Զինվորագրվել է Կարմիր բանակին և մասնակցել է Պետրոգրադում Ձմեռային պալատի գրոհին: Ռուսաստանում քաղաքացիական և խորհրդա–լեհական պատերազմների մասնակից է (1918–1920): Ուսանել է Բարձրագույն հրամանատարական կազմի ռազմա-ակադեմիական դասընթացներում (1923–1924), եղել է պրոֆ. Ն.Ե. Ժուկովսկու անվան օդային նավատորմի ակադեմիայի զինվորական ֆակուլտետի պետ (06.1924-ից), Մ.Վ. Ֆրունզեի անվան Ռազմական ակադեմիայի գլխավոր ղեկավար (06.1929-ից), կորպուսի հրամանատար (15.02.1936): Դարձել է Ստալինյան բռնությունների զոհ (23.02.1939)[38]:

Ներկայացված է Խորհրդային Միության մարշալ, Խորհրդային Միության կրկնակի հերոս Հովհաննես Բաղրամյանի (1897–1982) մարտական ուղին, որը սկզբնապես ունեցել է կորնետի կոչում, մասնակցել է Սարդարապատի ճակատամարտին (1918 թ. մայիս): Հետագայում անցել է ծառայության խորհրդային բանակում, աչքի է ընկել զորավարական տաղանդով Հայրենական Մեծ պատերազմի տարիներին (1941–1945), որից հետո զբաղեցրել է տարբեր պաշտոններ, որոնցից կառանձնացնենք ԽՍՀՄ զինված ուժերի

[37] Офицеры-армяне Первой мировой войны, с. 692–693.

[38] Офицеры-армяне Первой мировой войны, с. 1270–1271.

թիկունքի պետի պաշտոնը[39], որը նաև իրականացրել է ռազմական հետախուզության հետ կապված աշխատանքները:

Հակոբ Մելքումյանը (Յակով Մելքումով, 1885–1962), Առաջին համաշխարհային պատերազմի մասնակից է: Շնորհվել է պրապորշչիկի (24.02.1916), կորնետի (31.05.1916), ապա՝ շտաբս-ռոտմիստրի կոչում: Մոսկովյան 1-ին հեծելազորային գնդի հրամանատարն էր (1918): Մասնակցել է Կենտրոնական Ասիայի խորհրդայնացմանը և Օսմանյան կայսրության նախկին ռազմական նախարար Էնվեր փաշայի ուժերի դեմ մղված մարտերին: Ավարտել է Բանվորա-գյուղացիական բարձրագույն ակադեմիական կուրսերը (1924), Մ. Ֆրունզեի անվան բանվորա-գյուղացիական ակադեմիան (1934): Ծառայել է տարբեր վայրերում, հիմնականում՝ Կենտրոնական Ասիայում: Ունեցել է կորպուսի հրամանատարի կոչում: Բռնադատվել է 15 տարվա բանտարկության (1937), արդարացվել է (1954) և պահպանել է զինվորական կոչումը[40]:

Կորգանովների (Ղորղանյանների) ընտանիքի 28 ներկայացուցիչներ մասնակցել են Առաջին համաշխարհային պատերազմին, մի մասը ծառայել է ՀՀ և Սպիտակ բանակներում[41]: Նրանցից առավել նշանավորը գեներալ-մայոր Գաբրիել Կորգանյանն է (1880–1954)[42]:

Անդրեյ Մելիք-Շահնազարով (Անդրանիկ, 1887– 1937), փոխգնդապետ. Կարմիր բանակի գեներալ-լեյտենանտ: Ավարտել է Սուվորովյան կադետական ուսումնարանը Վարշավայում (1906), ապա՝ Նիկոլևյան հեծելազորային ուսումնարանը, որտեղ նրան շնորհվել է կորնետի կոչում: Առաջին աշխարհամարտի մասնակից, որի ընթացքում արժանացել է տարբեր սպայական կոչումների՝ պորուչիկ, շտաբս-սպա, փոխգնդապետ, ռոտմիստր, փոխգնդապետ (29.10.1917): Հայկական 1-ին հեծելազորային գնդի հրամանատարն էր (մարտ, 1918): Նրա համարզն է եղել կորնետ Հ. Բաղրամյանը (հետագայում՝ Խորհրդային մարշալ): Մասնակցել է բոլշևիկյան մայիսյան խռովությանը (1920): Խորհրդային տարիներին Հայկական առանձին հեծյալ բրիգադի հրամանատար էր, պրոֆ. Ն.Ե. Ժուկովսկու անվան Ռազմա-օդային ակադեմիայի հրամանատարական ֆակուլտետի հրամանատար (1931 թ. մարտից): Զբաղեցրել է

[39] Офицеры-армяне Первой мировой войны, с. 268–269.
[40] Офицеры-армяне Первой мировой войны, с. 782.
[41] Офицеры-армяне Первой мировой войны, с. 618–625.
[42] Офицеры-армяне Первой мировой войны, с. 620.

տարբեր հրամանատարական պաշտոններ: Ստալինյան բռնությունների զոհ է[43]:

Սիլիկյաններ ազնվական տոհմից ծառայության են անցել շուրջ ութ հոգի, որոնցից նշանավոր է Սարդարապատի ճակատամարտի հաղթանակի հեղինակներից մեկը՝ գեներալ-լեյտենանտ Մովսես Սիլիկյանը (1862–1937)[44]:

ՀՀ առաջին ռազմական նախարար, գեներալ–լեյտենանտ Հովհաննես Հախվերդյանը (Ախվերդով Իվան, 1873–1931), որը 1890 թ. ծառայության է անցել ռուսական բանակում և զբաղեցրել է տարբեր հրամանատարական պաշտոններ, մասնակցել է պատերազմին սկզբնապես ռուս-ավստրիական ռազմաճակատում, ապա տեղափոխվել է Կովկասյան ճակատ: 1918 թ. հուլիսի 24-ից մինչև 1919 թ. մարտի 27-ը եղել է ՀՀ ռազմական նախարար, Զբաղեցրել է այլ պաշտոններ: Խորհրդային կարգեր հաստատվելուց հետո ձերբակալվել և ուղարկվել է Մոսկվա, ապա՝ ազատ է արձակվել: Բնակություն է հաստատել Պետրոգրադում: 1930 թ. ձերբակալվել, ապա գնդակահարության է դատապարտվել խորհրդային պետական անվտանգության կողմից հորինված «Վեսնա» ընդհատակյա հակախորհրդային կազմակերպությանն իբր, անդամակցելու համար[45]: Նշենք, որ նման ճակատագրի են արժանացել շուրջ 13 հազար նախկին սպաներ[46], որոնցից շուրջ հազարը դատապարտվել է գնդակահարության[47]:

Ժողովածուում ներկայացվել է ՀՀ բանակի գեներալ–մայոր Հարություն Հովսեփյանցի (Արտեմ Օսիպյանց, Օսեփյանց, 1872–1921) կենսագրությունը: Նա ավարտել է Թիֆլիսի հրետանային յունկերական[48] ուսումնարանը (1889), մասնակցել է Առաջին համաշխարհային պատերազմի ռուս-թուրքական ռազմաճակատի մարտական գործողություններին՝ Հայկական I կամավորական

---

[43] Офицеры-армяне Первой мировой войны, с. 769.

[44] Офицеры-армяне Первой мировой войны, с. 1049–1051.

[45] Офицеры-армяне Первой мировой войны, с. 234–235. Ավելի մանրմասն տե՛ս **А. Ганин.** В тени «Весны». Бывшие офицеры под репрессиями начала 1930-х годов. Родина, 2014, № 6, с. 95–101.

[46] **А. Ганин.** В тени «Весны». Бывшие офицеры под репрессиями начала 1930-х годов. http://orenbkazak.narod.ru/PDF/Micro.pdf (մուտք՝ 11.04.2023).

[47] https://web.archive.org/web/20190703001800/http://encspb.ru/object/2804021801 (մուտք՝ 11.04.2023).

[48] Կրտսեր սպայական կոչում:

դրուժինայում[49]: ՀՀ-ում զբաղեցրել է տարբեր հրամանատարական պաշտոններ, մասնակցել է Լոռիի խորհրդայնացմանը (1921)[50]:

Ժողովածուում կան մի շարք ոչ էական անճշտություններ, որոնց վրա կցանկանայինք կենտրոնացնել կազմողների ուշադրությունը:

Նշվում է, որ գեներալ Թ. Նազարբեկյանը 1914 թ. նոյեմբերի 6-ին նշանակվել է 66-րդ հետևակային բրիգադի հրամանատար (էջ 5): Գեներալի հուշերի համաձայն իրեն նշանակել են վերը նշված զորամասի պետի օգնական[51] (տեղակալ), ապա՝ Կովկասյան 2-րդ հրաձգային բրիգադի ժամանակավոր հրամանատար[52]:

Ամփոփելով գրախոսությունը, հարկ ենք համարում նշել, որ կազմողների կողմից կատարվել է ծանրակշիռ հետազոտական աշխատանք: Եթե խորհրդային շրջանում առավել մեծ ուշադրություն էին դարձնում խորհրդային բանակում ծառայած հայ զինծառայողներին, ապա ներկա պատմակենսագրական բառարանով հասարակայնությանը ներկայացվում են ռուսական բանակում Առաջին աշխարհամարտում ծառայած հայազգի սպաների և Հայաստանի Հանրապետության զինված ուժերում ծառայած հայ, ռուս և այլ ազգերի սպաների ոչ միայն կենսագրականը, այլև անցած մարտական ուղին:

Հրապարակումով մեկ անգամ ևս հերքվում է այն թյուր կարծիքը, որ հայերը երբևիցե չեն եղել զինվորական ազգ, մշտապես ենթարկվել են տարբեր նվաճողների հալածանքների: Հայկական զինվորական ավանդույթներն իրենց արտահայտությունն են գտել տարբեր ժամանակաշրջաններում հայոց անկախության համար մղված բազմաթիվ մարտերում: Ներկայացված պատմակենսագրական բառարանը մեկ անգամ ևս ապացուցում է, որ հայության մարտական ունակությունները հանդես են գալիս, երբ հնարավորություն է ստեղծվում վերականգնել հայկական զինուժը: Հայոց գենը իր մեջ պահպանել է ռազմական ոգին, որի վկայությունն է ներկա բառարանում ներկայացված ռուսական զինուժում ծառայած զինվորականությունը: Կարծում ենք, որ պատմակենսագրական բառարանը կհանդիսանա այն կարևոր սկզբնաղբյուրը, որը հնարավորություն կտա հետազոտողներին լրացնել այս կամ այն զինծառայողի ոչ միայն կենսագրական, այլև անցած մարտական ուղին:

---

[49] **Ռ. Սահակյան.** Թովմաս Նազարբեկյանի անտիպ հուշերը, ՎԷմ, 2019, № 1, էջ 281:

[50] Офицеры-армяне Первой мировой войны, с. 884–885.

[51] **Ռ. Սահակյան.** Թովմաս Նազարբեկյանի անտիպ հուշերը, ՎԷմ, 2019, № 1, էջ 273:

[52] Նույն տեղում, էջ 274:

Համոզված ենք, որ նման մի ուսումնասիրություն կստեղծվի՝ նվիրված Արցախյան ազատամարտին, որտեղ անաչառ կներկայացվեն այդ ժամանակաշրջանի հայ և այլազգի զինծառայողները, որոնք իրենց ծանրակշիռ լուման ներդրեցին Արցախ աշխարհի ազատագրության և պաշտպանության նվիրված մարտական գործողություններին:

ՌՈՒԲԵՆ ՍԱՀԱԿՅԱՆ

Պատմական գիտությունների դոկտոր

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ

rubensahakyan58@gmail.com